Արձանագրություն N 3

«ԾՔ-ԳՀԽԱՇՁԲ-24/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով Ծաղկաձորի համայնքապետարանի կարիքների համար «Ծաղկաձոր համայնքի Մարմարիկ բնակավայրի վարչական շենքի վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական աշխատանքներ»-ի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

ք.Ծաղկաձոր 16 փետրվար 2024թ.
ժամը 10:00

Մասնակցում էին հանձնաժողովի նախագահ՝ Ծաղկաձոր համայնքի ղեկավարի տեղակալ Գարիկ Գևորգյան /ԳԱՊ/,
անդամներ՝ Մարմարիկ բնակավայրի վարչական ղեկավար Արթուր Քարամյան /ԳԱ/,
աշխատակազմի քաղաքաշինության,հողաշինության,գյուղատնտեսության,բնապահպանության բաժնի առաջատար մասնագետ Հայկ Բաբայան /ԳԱ/,
աշխատակազմի իրավաբանական, քարտուղարության, անձանակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ /բարեվարքության հարցերով կազմակերպիչ/ Սամվել Ալոյան /ԲԱ/,
աշխատակազմի իրավաբանական, քարտուղարության, անձանակազմի կառավարման բաժնի առաջատար մասնագետ Կարեն Ներսիսյան /ԲԱ/:
քարտուղար՝ Ա.Ավետիսյան

1. «ԾՔ-ԳՀԽԱՇՁԲ-24/3» ծածկագրով ընթացակարգի փաստաթղթերի անհամապատասխանությունների շտկման մասին

1.1 Ընդունել ի գիտություն, որ **«ԱՖԻՆԱ ՊՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ-ի** կողմից սահմանված ժամկետում և սահմանված կարգով շտկվել են ***«ԾՔ-ԳՀԽԱՇՁԲ-24/3»*** ծածկագրով ընթացակարգի փաստաթղթերի անհամապատասխանությունները:

1.2 Հանձնաժողովի որոշմամբ՝ «ԱՖԻՆԱ ՊՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ-ի հայտը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է՝ բավարար:

2. Տվյալներ հրավերով սահմանված ոչ գնային պայմանների գնահատման չափանիշների մասին

2.1 Ոչ գնային չափանիշները գնահատող հանձնաժողովի որոշմամբ գնահատվել են հետևյալ կարգով.

Ոչ գնային չափանիշներ	*Գնահատման չափանիշը*		
Մասնակիցների անվանումները	*Մասնագիտական փորձառություն*	*Աշխատանքային ռեսուրսներ*	*Ընդամենը*
«ԱՖԻՆԱ ՊՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ	40	30	70

2.2 Գնային պայմանը գնահատվել է հետևյալ կարգով **/համաձայն հրավերով սահմանված բանաձևի/**.

Մասնակիցների անվանումները	*Գնային պայմանի գնահատականը*
«ԱՖԻՆԱ ՊՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ	30

2.3 Բավարար գնահատված յուրաքանչյուր մասնակցին տրվող գնահատականը գնահատվել է հետևյալ կարգով **/համաձայն հրավերով սահմանված բանաձևի/**.

Մասնակիցների անվանումները	Մասնակիցներին տրված ընդհանուր գնահատականը (ՄԳ)
«ԱՖԻՆԱ ՊՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ	42

3. «ԾՔ-ԳՀԽԱՇՁԲ-24/3» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

3.1 Ընդունել ի գիտություն, որ **«ԾՔ-ԳՀԽԱՇՁԲ-24/3» ծածկագրով ընթացակարգին մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը գերազանցում է գնման գինը:**

3.2 Գնահատող հանձնաժողովի որոշմամբ,հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 6-րդ ենթակետի պահանջները, **«ԱՖԻՆԱ ՊՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ**-ն հայտարարվել է ընտրված մասնակից՝ պայմանով, որ վերջինիս հետ կնքվող պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքներն ու պարտականություններն ուժի մեջ են մտնում գնման գինը գերազանցող չափով լրացուցիչ ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համաձայնագիր կնքելու դեպքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

---

4. *«ԾՔ-ԳՀԽԱՇՁԲ-24/3» ծածկագրով ընթացակարգի գնահատման նիստի արդյունքների ամփոփման մասին*

Հանձնաժողովը որոշեց՝

4.1 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

4.2 **«Գնումների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 1) ենթակետի համաձայն՝** սույն ընթացակարգի մասով անգործության ժամկետը կիրառելի չէ, քանի որ միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, որի հետ կնքվում է պայմանագիր:

4.3 Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հրապարակումից հետո, պայմանագրի կնքման նպատակով, ընթացակարգի ընտրված/հաղթող/ մասնակցին ծանուցել՝ ներկայացնելով կնքվելիք պայմանագրի նախագիծը և առաջարկել **5 (10) աշխատանքային օրվա ընթացքում** ներկայացնել **պայմանագրի ապահովում՝ պայմանագրի գնի 10 տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ պայմանագրի գնի 15 տոկոսի չափով: Պայմանագրի և որակավորման ապահովումները ներկայացվում են՝ բանկային երաշխիքի կամ կանխիկի փողի ձևով:**

Հիմք ընդունելով Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերության 4-րդ մասը և 9-րդ ենթակետը՝ որակավորման և պայմանագրի ապահովումների չափերը հաշվարկվում են պայմանագրի գնի նկատմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

Գնահատող հանձնաժողովի անդամի անունը,ազգանունը	Ստորագրությունը
Նախագահ՝ Գարիկ Գևորգյան	
Անդամներ՝ Արթուր Քարամյան	
Սամվել Ալոյան	
Հայկ Բաբայան	
Կարեն Ներսիսյան	
Քարտուղար՝ Ա.Ավետիսյան	